ՏԱՐԱՐԱՐ

ՀԱՍԱՐԱԿԱՑԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՄՈՒՍՏՐԱԿԱՆ

ԸՍՏ ՀԱՇՎԻ ԹՎԻՆ — ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՀԻՆԳՇԱԲԹԻ 2 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1852 — ԹԻՎ 31

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի օր Պօսնայի նախկին կուսակալ Ալ. Էլիէտտին փաշայն, որն որ բարձրագոյն Աստանին նախագահ Մուսթաֆա Նայիլ փաշային երէց որդին է, Կայսերական տէրութեան մեծ դեսպան անուանեցաւ 'ի Փարիզ, փոխանակ Հալիմաքի պէյին որն որ ետ կանչուեցաւ։

Ալ. Էլիէտտին փաշայն դաղղիադէտ, ուղղագատ, արդարասէր և քաղաքագէտ անձ մը ըլլալով՝ այս բարձր պաշտօնին արժանաւոր էր ըսելը աւելորդ է։ Անշուշտ ընակիր յատկութիւններովը պիտի յաջողի և առաւել ընդարձակելու Կայսերական տէրութեան և Դաղղիոյ կառավարութեան մէջ տեղը գտնուած բարեկամական յարաբերութիւնները։

— Շաբաթ օր կայսերական հրովարտակաւ Եանիայի նախկին կուսակալ Իսմայիլ փաշայն Օսմանեան Արշիպելագոսի ընդհանուր կառավարիչ անուանեցաւ փոխանակ Մուսա Սաֆվէթի փաշային որուն Թէքիրտաղը ուղղուիլը նախընթաց թերթով խմբագրեցինք։

— Անցեալ երիքշաբթի, չորեքշաբթի շաբաթ և այս երկուշաբթի և չորեքշաբթի օր բարձրագոյն փոխարքայի նախագահութեամբ նախարարաց ժողով եղաւ և երկուանդամ նախկին եկեմոնի նախարար Սաֆվէթ փաշայն կանչուեցաւ։

— Լավալէթի մաքքէպը հինգշաբթի և շաբաթ օր բարձրագոյն փոխարքային և արտաքին գործոց նախարար վեհամփայլ էֆէնտիին մասնաւոր խօսակցութիւն ընելու համար այցելութեան դնաց։

Յառաջագոյն դաղղիական լրագիրը կը դրէր թէ այս ժողովները ու խօսակցութիւնները Կոստանդնուպօլսոյ պանթպէյն Փարիզ և Լոնտրա բրած 50,000,000 ֆրանգ փոխառութեան գործին կը վերաբերին։ Անշուշտ աս ժողովներուն մէջ քննուած ծանը խնդիրը մեծաւ արգարասիրութեամբ պիտի որոշուի։

— Շաբաթ օր բարձրագոյն ատեանին անդամներէն Աղիպտոսի կուսակալութեան փաշա Հեմիա Մուխտար պէյը յատուկ պաշտօնով մը Օսմանեան ընկերութեան Ռէ-դուսոպ անուն շոգենաւով Այրաքաղաքէս մեկնեցաւ Ազնիքանդրիա երթալու համար։

— Ի-էֆմանէրուն երէցը Աբասղլատ Համտուլլահ էֆէնտին անցեալները վախճանելով, անոր տեղը հասարակաց կրթութեան ժողովոյն նախագահ Ապտիւլհաք էֆէնտին ի-էֆմանէրուն երէց եղաւ։

— Ղանիկի նախկին կառավարիչ Ասաբի փաշայն Թրհալայի կուսակալ անուանեցաւ։

— Ղալիպ պէյը որն որ Պօսնայի նախորդ կուսակալ Ալ. Էլիէտտին փաշային խորհրդոյ քարտուղարն էր, Մէնալոքայի փայտագամ կարգեցաւ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ. Լօնտօն 27 սեպտեմբերի։ Նախընթաց թերթով Ուէլինկթընի դուքսին մահուան լուրը հրատարակեցինք։ Յիշեալ հռչակաւոր վախճանելոյն թաղման հանդէսը արժանաւոր փառօք և հասարակութեան խընդրոյն համեմատ կատարելու համար՝ վեհափառ թագուհին մանրամասն պարագաներով առաջարկութիւն մը պատրաստեր է, որն որ ազգային խորհրդարաններուն քննութեանը տակ ձգելով՝ անոնց հաւանութիւնը պիտի խնդրուի։ Այս պատճառով երևելի դուքսին թաղման հանդէսը փոքրագոյնը բացուելէն ետքը պիտի կատարուի։ Անգղիոյ բոլոր քաղաքներէն յիշեալ թաղումին ներկայ գտնուելու համար՝ պատգամաւորներ դալիքը հաւաստի է։

Ուէլինկթընի դուքսին մարմինը Լօնտոնի Ս. Պօլսոյ մայր եկեղեցին պիտի թաղուի հրաշակաւոր ծովապետ Նելսոնին գերեզմանին քովը, և այսպէս մէկը ծովու միւսը ցամաքի վրայ մեծ յաղթութիւններով համբաւ ստացող Անգղիոյ երկու երևելի անձինքը յետ մահուան իրարու հետ պիտի միանան։

Վեհափառ թագուհին Ուէլինկթընի մահուան պատճառաւ՝ ամսոյս 21էն սկսելով մէկ շաբաթ սուգ պիտի պահէ հանդերձ օգոստափառ ընտանեօքը։

Ուէլինկդընի դուքսին մարմինը այսու հետև հասարակաց ստացուածոյ կարգը անցած ըլլալուն՝ Ուէլինկդընի գերդաստանը անոր վերաբերեալ հանդէսներուն պիտի չի խառնուին։ Վախճանելոյն Ուէլմար Քասթլ ըսված ընակարանին պահպան զօրաց հրամանատար միսթր Ուալթսը ամեն առաւօտ և իրիկուն կերթայ կընայի որ դուքսին մարմինը դրուած տեղէն չի վերցուի։ Անթիւ մարդիկ Ուէլինկթընի դուքսին սպասաւորէն վախճանելոյն մանրէն կամ ուրիշ գործածած բաներէն կը խնդրեն։ Մէկը դուքսին բանակատեղիները պարկած անկողինը 100 լիւայի ծախու առեր է, և մէկմըսակ դուքսին վերջին շունչը փչած ատենը նստած աթոռին ծանրութեանը չափ ոսկի տալով անիկայ գնել ուզեր է։

Դուքսին մանրը կարող սափրիչը եթէ քիչմը նենգութիւն ընելու ըլլայ շատ ստակ պիտի վատրկի։

Դուքսին թուղթերը շատ կանոնաւոր վիճակի մէջ են, և լորտ Անհօնին յանձնուեցան որ անմիջապէս հրատարակուին։ Ուէլինկդընի դուքսը այս մասին իւր հին բարեկամ Թալեյրանին օրինակին չի հետևեցաւ, որն որ կտակաւ պատուիրած էր որ իւր թուղթերը 1868էն առաջ չի տպուին։

— Ուէլինկթընի դքսին տեղը Անգղիոյ բոլոր զօրաց հրամանատարութիւնը Լորտ Հարտինճին յանձնուիլը մարդկանց հերբաբ լրագրին մէջ կը կարդամք։

Այս Լօնտ Հարտինճը 67 տարեկան և Լօնտոնտերրիի մարքեզին փեսան է։ Ուսթերլիցի պատերազմին յիշեալ Լորտն ալ ներկայ գտնուելով՝ ձախ բազուկը կորուսած է։ Սկսեալ առաջ Հնդկաստանի ընդհանուր կառավարիչ, և ետքը պատերազմի նախարար եղած է։ Հնդկաստանի մէջ իւր տէրութեան ըրած ծառայութեանը փոխարէն՝ 5000 լիւա ռոճիկ կառնէ։

ԳԱՂՂԻԱ. Փարիզ 29 սեպտեմբերի։ Նախագահ իշխանը Մուլէնէն Լիոն և Կըրընոպլ քաղաքը գնաց, և անկէ Ավինեսն անցնելով Միջերկրական գաւառներէն այցելութեան գացած բոլոր քաղաքներուն մէջ՝ գաղղիացիք կայսրութեան հաստատուելուն և հրատարակուելուն համար մեծ փափաք կը յայտնեն։ Այսու աղագաւ նախագահ իշխանն ալ իւր սովորական զգուշութիւնը մէկ դի ձգելով՝ այս անգամ Լիոն քաղաքը Մեծ Նարօլէոնին արձանը կանգնելու հանդէսին ներկայ գտնուած ատենը ըրած ատենաբանութեան մէջ գաղղիացւոց կայսրութեան մասին յայտնած խնդիրը կատարելու յանձնառու ըլլալը կերպիւ մը ծանուցած ըլլալուն համար Մոնիթէր ըսուած Փարիզի պաշտօնական լրագրին ալ այս մասին դեռ կախ մնացած կասկածները կը փարատէ պարագաներուն յարմար յօդուածներ հրատարակել սկսելով։ Ուրեմն քիչ ժամանակէն՝ Գաղղիոյ հասարակապետութիւնը կայսրութեան փոխուելու լուրը կարծեաք պիտի կրնամք հրատարակել։

Կ'ըսեն ալ թէ Գաղղիոյ կառավարութեան կողմէն Լիոնի պաշտօնեայ մը գացած է որ Պապը Փարիզ հրաւիրէ Լուի Նարօլէոնը կայսր օծելու համար։

— Մարսիլիայի ոստիկանութիւնը քանի մը ժամանակէ հետէ իմացած էր թէ յիշեալ քաղաքը Լուի Նարօլէոնի կենացը վախճան տալու համար՝ գաղտնի միաբանութիւն մը կազմուած էր։ Հարկաւ պէտք եղած զգուշութիւնը'ի գործ դնելով՝ նոյն դաշնակցութեան անդամները ձեռք ձգեր է, որոնք գէոխաչէ մը հնարած էին 4 թնդանօթներէ և 250 հրացաններէ բաղկացեալ որոց մէջ 1500 գընդակ կար։

— Նախագահ իշխանը ամսոյս 26ին Մարսիլիա հասնելով՝ վաճառականաց ժողովարանին նոր հիմանցը առաջին քարը մեծաւ հանդիսիւ դրաւ. և անկէց նաւատորմիղին ուղևորութեամբը մեկնելով՝ այն օրը թուլոն հասաւ։ Առայժմ Այքս քաղաքը կը գտնուի։

ԱՒՍՏՐԻԱ. Վիէննա 26 սեպտեմբերի։ Ռուսիոյ կայսր երէց որդի և կայսերութեան ժառանգ Աղեքսանդր մեծ դուքսը մայրաքաղաքէս անցնելով Թէսթ քաղաքը գնաց կայսեր ներկայութիւնը կատարուելու զօրահանդէսները տեսնելու համար։

— Կը հաստատեն թէ Աւստրիոյ տէրութիւնը 30 միլիոն ֆլորին արծաթ նորէն պիտի փոխառնէ անցեալները բրած փոխառութեան պայմաններովը. ասկէ'ի զատ մէկ փոխառութիւն մըն ալ պիտի ընէ, որուն վերաբերեալ մուրհակները յատուկ վարձ մըն ալ պիտի ունենան։ 1840էն հետէ տէրութիւնը չորս փոխառութիւն ըրաւ, որոնք 275 միլիոն ֆլորին կը հասնին. նոյն ժամանակի ընթացքը մէջ կայսերական գանձուն բացը մնացած պարտքը 231 միլիոն ֆլորին հասաւ։ Ուրեմն 44 միլիոնի չափ ստակ աւելցած է։

— Աւստրիոյ կառավարութիւնը մաքսանենգութիւնը արգիլելու համար՝ առ այժմ ութսուն հազար մաքսի պահապաններ ունի. Կաղէր որ Ռէ-։

ՌՈՒՍԱՍՏԱՆ։ Սեպտեմբերի 8ին Ռուսիոյ Կայսեր հրովարտակաւ ձիաւոր զօրաց բանակին հրամանատար Աւսիէս Ղէրենիէֆը, որ քսանուհինգ տարիէ հետէ պատերազմի նախարարութեան պաշտօնը կը վարէր, իւր խնդրոյն համեմատ՝ նոյն պաշտօնը վրայէն վերցաւ, միայն կայսերական ատեանին նախագահութեան պաշտօնը վրան մնալով։ Յիշեալ պաշտօնէին օգնական Տօլգորուքի ա իշխանը անոր յաջորդեց իբր պատերազմի նախարար։

Տրպէրկ ա. և Իկնաթիէֆ ա. զօրապետները կայսերական ատեանին անդամ անուանեցան։ Ժ-ռնալ դը Փէթերպուրկ։

— Սանկտ Պետրսպուրկ 18 սեպտեմբերի։ Վեհափառ Կայսրը ամսոյս 14ին մեկնեցաւ ներքին գաւառները շրջելու համար։ Նիքոլայ և Միխայիլ մեծ դուքսերը մէկ օր առաջ մեկնեցան։ Վոշիրսէնսքի ըսուած բանակատեղին երթալու ուր տեղ մեծ զօրահանդէսներ կատարուելիքը արդէն հրատարակուեցաւ։ Սուէլ կազէթ դը Փէթերպուրկ։

ՆԱՊՈԼԻ։ Պրինտիզի և Նարօլիի մէջ տեղը շինուելու երկաթուղոյն շինութիւնը Նէապօլսեցի մէկ երկրաչափի մը յանձնուեցաւ հետևեալ պայմաններով։ Յիշեալ երկաթուղին Ռուքլիայի գաւառէն անցնելով մինչև Ադրիական ծովու եզերքը Պարլեթթա ըսուած քաղաքը պիտի երթայ, և Պարիէն անդնելով Պրընտիզի պիտի վերջանայ։ Այս երկաթուղոյն շինութեան ծախքը 54,000 պուտի կամ 234,786,95 ֆրանգ պիտի ըլլայ ամեն մէկ մղոնը։ Տէրութիւնը գործածուելու դրամագլխին վրայ % 4 տոկոսիք կը երաշխաւորէ։ Երկաթուղին

զին ուրմսուն տարի արտօնութիւն ունի և շինութիւնը չորս տարուան մէջ պիտի վերջանայ։

ԱՄԵՐԻԿԱ։ Թուպայի կղզին օգոստոսի 20ին սաստիկ երկրաշարժ մը պատահելով Սանդիակոյի երևելի քաղաքը բոլորովին կործաներ է։

ԱՋԳԱՍԷՐ ԵՒԻՐԵՐ

Մէկ քանի շաբաթ առաջ ծանուցինք յարգոյ հասարակութեան, թէ Սամաթիոյ կրակէն այրուած խղճալիներուն օգնութիւն ընելու դիտաւորութեամբ ստորագրութիւն մը բացուեցաւ Հրամանաւ Սրբազան Պատրիարքին, և դիտութեամբ ազգային գերագոյն ժողովոյ, և թէ՝ ստորագրուող և կամաւոր ողորմութիւն շնորհող բարեպաշտներուն ստակը ըստ արժանւոյն և ըստ վայելուչին անօրինելու համար մէկ քանի վերատեսուչ անձինք ընտրուեցան։ Երդ՝ այս անգամ ուրախութեամբ կ'ծանուցանենք, թէ այն ընտրուած վերատեսուչներուն աշխատասիրութեամբը բաւական ստակ ժողովուեր է, և դեռ ժողովուելու վրայ է։ Աւելորդ կ'համարինք ըսել, թէ կամաւոր ողորմութենէ ժողովուած ստակը քանի՞ մսխիթարութիւն տուաւ խղճալեաց, քանի քանի աղօթից և օրհնութեանց պատճառ եղաւ։ Միայն այսչափ կըսենք, որ եթէ այս անօրէնութիւնը չըլլար, և ասանկ մարդասէր անձինքը յօգնութիւն չհասնէին, իրաւի ակամայ յուսահատութիւն պիտի գար շատերուն վրայ։ Ըստուած անմխիթար չթողուր զմարդ, միայն թէ մարդը դիտնայ ամեն մէկ ատեն սրտիւ դիմել յԱստուած։

Արդասէր բարեպաշտներէն կան ոմանք, որ ստորագրուեցան, ու յանձնեցին վերատեսուչ անձանց, ինչ որ իրենց սրտէն բղխեց, և ասոնց անունն ու տուած ստակնին պիտի յիշենք այսօր։ Կան ալ ոմանք, որոնք թէպէտ ստորագրուեցան ըստ սովորական մարդասիրութեան իւրեանց, բայց վերատեսուչ Աղաները իրենց ըզձմանց պատճառաւ դեռ չկրցան երթալ ժողովել ասոնց ստորագրուած ստակը։ Որովհետև ասոնցմէ հետ զհետէ պիտի ժողովուի ստակը, մենք ալ քանի ժողովուի հետ զհետէ պիտի յիշենք ասոնց անուններն ալ տաղու ստակնին ալ։

Սամաթիոյ հրիշէլոց համար ողորմութիւն տուողներուն անունները։

	ղուռուշ
Ռանիկ ամիրայ	2000
Մկրտիչ ամիրայ	2500
Աբրահամ ամիրայ Ալահվէրտեան	1500
Մաքսուտ ամիրայ	2000
Գէորգ ամիրայ	2000
Աղաք	
Կարապետ Յրամեան	1000
Նշան Փիշմիշեան	2000
Յակոբ Թիւրքճիխանլեան	1500
Պետրոս Խորասանճեան	1500
Աւետիս և Գէորգ Պարտիզպանեան	1000
Պաղտասար Նէվրուզեան	500
Մարտիրոս Արզուսեան	250
Յովհաննէս Լաղճեան	500
Կարապետ Մարիեան	300
Մկրտիչ Ոնմճեան	750
Նիկողոս Ընտսնեան	250
Գէորգ Ալաճաճեան	250
Մ. Նշան Նուրիկեան	500
Միրճան Հաճիեան	750
Մ. Յովհաննէս Ալանեան	1100
Գալուստ Կոստանդեան	250
Գրիգոր Կոստանդեան Օմիւռնացի	1000
Յակոբ Կրճիկեան	200
Յովհաննէս Աղաեկեան	100
Յակոբ Գրէնկեան կեսարացի	300
Խաչը Խաչեան	300
Սահակ Կիւլպէկեան	100
Մ. Պաղեր Մանուկեան	300
Յարութիւն Պաղերեան բինկեանցի	250
Կոզմոզ Ռանիկեան	50
Մկրտիչ Մուրթաֆեան	100
Մանուէլ Աբիզեան	100
Պօղոս Տիքիճեան	100
Գէորգ կեւվերջիլէ միւրիի	150
Մ. Մանուէլ Գէորգեան	100
Յովհաննէս Թապաքճեան	100
Գրիգոր Տ. Յակոբեան բինկեանցի	100
Սինեօր Թիրը Փալի	500
Պօղոս Միրասխեան	500
Կարապետ Պասմաճի	100
Գրիգոր Թաթարեան	100
Սարգիս Լարինեցի	100
Յարափայել Յակոբճանեան	125
Սէրովբէ Ռիլաճեան	200
Լաղուպ	100
Պետրոս Թիրեաքեան	500
Օգատէր Ջիպուքճը	250
Յովհաննէս Անապահեճի	50
Մկրտիչ Սաաթճի	100
Յարութիւն Միրասխան	250
Մարտիրոս Պէրպէռեան	100
Մարտիրոս Բարունակեան	100
Ստեփան Պոյաճեան	150
Ոմն բարեպաշտն	100
Կարապետ Նուրեան	300
Աբրահամ Մինասեան	100
Աւետիս Պոյաճեան	100
Մկրտիչ Փափազեան	100
Գրիգոր Սէյէխան	100
Նասիպ	100
Գէորգ Փանոսեան	50
Մինաս Թոքաթլեան	300
Յակոբ Պէշիկթաշլեան	250
Մարտիրոս Իշպէկեան	200
Գրիգոր Կարապետեան	200
Գալուստ Մ. Ջամբարճումեան	200
Յակոբ Խոսրոֆեան	100
Խաչատուր Պալըրեան	200
Ոմն բարեպաշտն	50
Աւետիս Կարօլեան	50
Պետրոս Ջէրիմեան	100
Կիրակոս Բինկեանցի	100
Մարտիրոս Միւսաֆճեան	50
Յակոբ Խաչամանճեան	200
Յակոբ Վիշենեան	150
Յովհաննէս Լաղճեան	100
Աղեքսան	100
Ադամ	50
Ստեփան Ռանիկեան	100
Պետրոս Էֆէմեան	230
Յովհաննէս Ռէնալեան	115
Մարտիրոս Ռէնալեան	150
Պաղտասար	50
Յարութիւն Մեսրոպեան	150
Յարութիւն օտապաշի Լալալը խանի	100
Պետրոս Աղարիկեան	50
Խաչատուր Մարիասեան	50
Մուրեան	100
Աղեքսան Մալիֆաթուրաճի	200
Աւետիս Լաղմաճեան	300
Աղաճան Մկրտչեան	100
Կիւլպէսէր	40
Յարափայել	30
Պօղոս և Յովասաբ Լօրտամեան	300
Ընձ մի	57 ½
Աղա պէյ Պապուճեան	50
Գէորգ Սախայեան	115
Մկրտիչ Յովակիմեան	200
Յովսէփ Պապայեան	100
Մ. Մարտիրոս	30
Մանօլ Լանքօ	40
Բարեպաշտ ոմն	60
Ռնրմակենց	60
Ազատի օղլու	40
Յարութիւն օտապաշի	20
Բարեպաշտն ոմն	40
Յովհաննէս քէրէստէճի	50
Ստեփան փանայիրճի	50
Յարութիւն Սարգիսեան	20
Գրիգոր Պեռտոսեան	57 ½
Մինեօր Յարափայել Սեխպոսեան	100
Վանցի Հայրապետ	250
Պօղոս Սէմէրճեան	250
Մարտիրոս	200
Յարութիւն Տիքիճեան	50
Սինեօր Իսակ Բամանթօ	500
Վանցի Օսքար Թէրլէմէզեան	100
Թագուոր Նշանեան	250
Սերոբիկ միզանճի	50
Կարապետ Մինճանճի	200
Խաչամանճի էսնաֆէն	624
Սալթամարքաճի էսնաֆէն	700
Սատիէոս ղուլումճի ակնցի	50
Կարապետ Պէկեան	115
Ղուխաճի էսնաֆէն	480
Ընդրէաս Հասունեան	250
Գրիգոր Ալբիարեան	40
Գրիգոր Հէհրիան	40
Յովհաննէս	50
Յակոբ	40
Պետրոս Լաղմաճեան	20
Պէրպէռեան	50
Յակոբ Պէզէլեան	20
Գէորգ Խրլսաղաճեան	57 ½
Մկրտիչ Լաղճի	50
Պօղոս Իւսկիւտարցի	44
Մ. Հեթում	40
Սահակ Գրէնկեան	50
Խաչատուր Պապայեան	115
Կուլիճեան	150
Յովհաննէս	50
Ըստուածատուր	20
Ռնրմակ Սահակ	57 ½
Մինասլ	48
Բարեպաշտն ոմն	10
Պատուլաղ	20
Յովհաննէս Հալէպեան	30
Բարեպաշտն ոմն	26
Մանուկ Սմբատեան	40
Դիւրքճիւ էնաֆէն	730 ½
Հացագործ էնաֆէն	12000
Պէրպէռ էնաֆէն	2490
Աղեքսան Լուսուֆեան	250
ընդ ամենը	56087 ½

Այս գումարը[1] որ առատաձեռն ողորմութիւններէ ժողոված է և այն որ ասկէ ետքը պիտի ժողովուի, մեծ ապացոյց է ոչ միայն յարգոյ հայոց հասարակութեան սովորական մարդասիրութիւնը, հապա նաև (ուրախ սրտիւ կը նշմարենք,) գովելի և աստուածահաճոյ միաբանական սիրոյն, որով մերազնիք ամեն ժամանակ իրարու հետ կապուած են, և որ երջանկութեան առաջնորդն ու համոզիչ նշանն է։ Ըստուած այս սէրը և միաբանութիւնը մեր ազգին մէջէն չըպակսեցընէ, որովհետև անով միայն (բարեխնամ Կայսերնուս շնորհացը մէկ տեղ) ամեն բարեաց արժանի կրնանք ըլլալ և խաղաղութեամբ վայելել։

— Աղգասէր անձ մը հետևեալ նամակը մեզ ուղարկած է, զոր կը փութամք հրատարակել անոր խնդրոյն համեմատ։

Յարգոյ տեարք Լեյեան աղաներոյ

Այս օրերս երկու դիրք անցան մեր ձեռքը, մէկը՝ իտալերէն, և միւսը՝ հայերէն։ Իտալերէն դիրքը՝ Հռովմայու դպրատունէն ելած և քսանէ՝ ցի ըսուած մէկ քանի վարդապետի գործ է, ըստ Իլլրս Եպիսկոպոսին դաղղիացւոյ։ Այս իտալերէն դիրքը ով որ կարդայ, որ կողմէն և կարդայ և քանի հեղ ալ կարդայ, միշտ միևնոյն բանը կ'գտնայ մէջը. այսինքն թէ՝ «Հերձուած և մոլորեալ և հերետիկոսներ են Հայերը. ուստի Վենետիկի մխիթարեանք ալ ասանկ Հայոց հետ հաղորդակցութիւն ունենալուն համար, հերձուած և մոլորեալ և հերետիկոս են, ոչ աւելի և ոչ պակաս»։ Ահա այս է իտալերէն նորատիպ դիրքին սուտ և ծուռը։

Դանք հայերէն դիրքին։ Այս հայերէն դիրքն ալ Վենետիկի վանքին մէջ ապուած և Վենետիկի մխիթարեան վարդապետաց գործ է։ Այս դիրքն ալ կարդացողը ուրիշ բան չգտնար մէջը, եթէ ոչ այս իմաստը. թէ «Հայերը թէպէտ հերձուած և մոլորեալ և հերետիկոս են, բայց Վենետիկի մխիթարեանք ոչ հերձուած են, ոչ մոլորեալ և ոչ իսկ հերետիկոս, ինչու որ հաղորդակցութիւն չեն ըներ Հայոց հետ»։ Ահա հայերէն նորատիպ դիրքին ալ ծուռը։

Այս երկու դիրքին բուն իսկ իմաստները համառօտապէս հասկցունելէն ետև, հիմա հոս մէկ երկու խորհրդածութիւններ ընենք կառնառօտ։

Քօղէնցիները ինչ որ կ'ըսէին առաջ, հիմայ ալ նոյնը ըսեր են առանց խղճի և առանց երկիւղածութեան. այս ինքն ասանք կ'ըսէին, թէ Հայ ազգը՝ հերձուած, մոլորեալ և հերետիկոս է. ահա հիմայ ալ նոյն չարախօսութիւնները ըրեր են իրենց անձուռնի դրքին մէջ։ Ըսել կուգենք, որ քօղէնցիք առաջ կ'բամբասէին զազգը, հիմայ ալ բամբասեր են. առաջ կ'չարախօսէին, հիմայ ալ չարախօսեր են. առաջ կ'հայհոյէին, հիմայ ալ հայհոյեր են. թէպէտ իրենց առ հինաւուրց անզգամութիւնը նարէն յայտնելու առիթ մը չունեցան։ Մարդս որ և իցէ պէտք է թեան սորվելէն ետև, նոյն գէշութիւնը ամեն անգամ կընէ, առիթ գրդռման ունենայ կամ չունենայ։ Երդ՝ ամեն մարդ դիտէ, որ գօղէնցիները սորուած և վարժած են ազգատեցութեան, զրպարտութեան և կերպ կերպ քամահրելի վատութեան. ուստի ահա հիմայ ալ իրենց սորվածներն և շատ ատեն անխիղճ գործածներն նորէն ի գործ դրեր են։ Ասանկներուն վրայ զրպարտել չվայելեր, հապա ցաւիլ կուզէ, որ ասանկ անբուժելի ախտերով վարակեր են ու չեն գիտեր, ինչ կընեն։ Մէկ կողմն ազգին կրոնը կ'պարսաւեն, և միւս կողմէն ալ ազգին ազգութիւնը չընդունին, ուրանալով բացարձակ և յայտնապէս ազգին լեզուն և հայութիւնը, ինչպէս որ անցեալներն ալ իրենց աշակերտներէն մէկ քանին ուրացան հայութիւնը արքունի նախարարի մը քով, թէպէտ և արժանապէս յանդիմանուեցան։ Ասանկները ինչ պատասխան պիտի տան Աստուծոյ։

Հայ ազգը որչափ ցաւեցաւ և կ'ցաւի քօղէնցւոյ և անոնց համեմատ աշակերտաց վրայ, այնչափ ալ և դուցէ առաւել ևս պիտի ցաւի Վենետիկի մխիթարեանց վրայ, տեսնելով, որ ասոնք ալ սկսեր են արձակ համարձակ արհամարհել և անդամնել զՀայս, հերձուած, մոլորեալ և հերետիկոս անուն տալով Հայերէն նորատիպ դիրքին մէջ և պապէն իրկուած ջատագովութեան մէջ։

Վենետիկի մխիթարեանց ինչ եղաւ, բերանին ինչու փոխեցին. ասանք մինչև հիմայ պաշտպան և ճշմարիտ բարեկամ Հայոց կ'ձևանային. հիմայ ինչ պատճառաւ ազգին վնաս հասցընել կուզեն. քանի՞ հերձուած կամ մոլորեալ կամ հերետիկոս անուն տալով Հայոց, անոնց պատիւը կոտրելու ջանալ Եւրոպայի բոլոր ազգաց առջև ասիկակ ընտսել է ազգին, կամ ընտսել ուզել է։ Մինթէ ինքը վինքնիս արդարացունենք ըսելով, ասանկ յայ և յահեակ անխնայ և անդուշաբար զարնելու էին. մե՞զ. հազար մե՞զ. չէինք կարծեր և չէինք յուսար, որ Վենետիկի մխիթարեանք ալ Հայ ազգին ընդհանրութեան կողմանէ կամակոր և դիտամբ ընտսնուած կամ դէթ դոյն ինչ չարիք մը չտեսնելով, ազգին ինաս հասցընելու ելեն։ Վնաս կամ չարիք տեսած ալ ըլլայն, իրենք այս ատեճան առելութիւն ցուցընելու չէին, հերետիկոս և այլ այսպիսի վատ անուն տալով ազգին, որովհետև իրենք հայագէտ ըլլալով՝ ասանկ բառերուն դժը լաւ դիտեն։

Ինչ ևիցէ, ազգը խաբուեր է եղեր. մխիթարեանները բարեկամ կ'ճանչնար, բարեկամ չէին։ Բայց սա օգուտը ըրաւ, որ հիմայ գիտցաւ իր խաբուիլը։ Ամեն մէկ մարդ, ըստ որում մարդ, կ'խաբուի և կ'սխալի այս աշխարհիս վրայ, ուրեմն ազգն ալ ասանկ սխալական մարդերէն բաղկացեալ ընկերութիւն մը ըլլալուն համար, կրնայ խաբուիլ։ Ինչպէս որ խաբուեցան։ Ո՞վ չխաբուիր և ո՞վ չխաբնիր։ Ազգը թէպէտ խաբուեցաւ, բայց գիտցաւ ու հասկըցաւ, թէ որ ևիցէ կամակոր վարդապետ՝ ճշմարիտ և անձնանուէր բարեկամ չէ՝ եղեր, և չպիտի կրնայ ըլլալ։

Խաբերէն և հայերէն սա երկու կողմ գիրքին մէջ դեռ շատ կան ասանկ անվայել զրոյցներ, սուտ զրպարտութիւններ, անհիմն և ինաստակար չարախօսութիւններ, քաղաքավարութեան դէմ ձեռնարկութիւններ մի քան զմի ծանր և սիրտ ծակող։ Բայց մենք որովհետև վիճաբանութիւն ընելոյ միտք չունինք, ուստի զանոնք ամենը կ'ձգենք կը

պահենք, մինչև ժամանակը և պարագաները փոխուելու տան, յոչ համայ մերոց։

Իսկ հիմայ այսչափ միայն կըսենք, թէ Հայ Եկեղեցին ոչ հերձուած է եղեր ոչ մոլորեալ և ոչ իսկ հերետիկոս։ Հայ Եկեղեցին սուրբ և առաքելական էր յառաջն. հիմայ ալ սուրբ և առաքելական է։ Երդ՝ Հայ ազգը Նոյն սուրբ Եկեղեցւոյ զաւակնե՞ է, ուստի կառաքեալ քրիստոնեայ է, և ոչ թէ հերձուած կամ մոլորեալ կամ հերետիկոս։

Ես ալ ըսենք ի վերջոյ, թէ մենք բոլոր ազգին կողմանէ արհամարհանք կ'հերքենք (փրոթէսթանտ կընենք)։ այն զէշ բառերը և անհիմն զրպարտութիւնները, և եթէ պէտք ըլլայ ուրիշ այլեւայլ լեզուներով ալ կ'հաստատենք ամեն քաջութիւն։

Լուսաւորչական Հայ ոմն։

— Հետևեալ նամակնալ իբրեւ տպուեր Մխիթարեանց տետրակին, ուղարկած են այս շաբաթ քանի մը ազգասէր անձինք։

« Երգոյ Տեարք Լեյեան Աղաներոյ

» Դիտանալով Ձեր Աղնուութեանցը ազգասիրական ընտրութիւնը, որ միշտ կը բարեհաճիք յազգասիրուն շարժեալ անձն տալ բազմարգիւն լրագիրներնուդ մէջ այն լուրերուն, որոնք Աղգիս օգտին կը վերաբերին, կ'աղաչեմք շնորհք ընել սոյն յօդուածս ալ հրատարակել, որ կարծեմ արդոյ հասարակութեան ալ բաւական հաճոյ լուր մը կրլլայ։

» Դանդի սեպտեմբեր 28ին կիրակի օրը Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյն տօնախմբութեան օրը ըլլալով, Ամենապատիւ և ազգասէր Սրբազան Պատրիարքը ուղղելով հանդէսը շքեղացունել և իր հոգևոր որդիքը մխիթարել, բարեհաճեցաւ գալ շաբաթ օրուընէ. որ օրը անմիջապէս չի զլացաւ այն տեղի Ս. Սահակեան բարեհամբաւ վարժարանին այցելութեան գալու, և յատկապէս փոքր քննութիւն մը խնդրեց. ուստի աշակերտելք քընուեցան Հայկարանութեան, Տաճկերէն, Յունարէն, Դաղղիարէն և Անգլիարէն լեզուաց մէջ։ Ի ներկայութեան ազգասէր Սրբազանին, որն որ կրկին և կրկին գոհ ըլլալով թէ դպրոցին բարեկարգութենէն, թէ աշակերտաց ուսմանց մէջ յառաջադիմութենէն և թէ Երդոյ Հոգաբարձուաց և բարեջան դաստատուաց անդուլ ջանքերէն, զամենքը օրհնեց և իրեն համար պատրաստուած տեղը վերադարձաւ։

Հետևեալ օրը ազգասէր Սրբազան Հայրը մեծ հանդէսով Ս. Պատարագ մատոյց, բայց նոյն շքեղ հանդէսը որչափ մխիթարութիւն և ուրախութիւն պատճառեց ջերմեռանդ ժողովրդոց, երբ առաքելոցի ժամանակ երեսուն տարիէ՝ ի վեր Կոստանդնուպօլսոյ եկեղեցեաց մէջ անյիշատակ մնացող մեր շնչաւորիկ Սրբոց Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի և Մովսէսի Տաթևացեաց փափաքելի անունները հնչեց Հայաստանեայց որդւոցս ականջին սպասաւորութիւն ընող անձը. Հայաստանեայց Եկեղեցւոյն այն լուսաւորիչներուն համար կըսեմ որ Ընթիմոնեանց աշխարհակործան աղանդին դէմ մաքառելով լուսաւորչական Ս. Հաւատքը մինչև ցայսօր անարատ պահելու պատճառ եղան, որովհետև այն աղանդին նպատակը Եկեղեցւոյս արարողութիւնները լատինականի՝ յեղափոխել և բոլոր Աղգիս լուսթիւնը ջնջել էր, որուն օրինակը այսօր իրեն հարազատ ու անաչառ կարծուած հատուածեալ որդւոցը վրայ կը տեսնենք, ինչպէս և այն նորոգ հրատարակեալ պարսաւելի գրքին մէջ իրենց սրտերնուն թոյնը (թէ մեր բռնած ճամբան թէ գրոց և թէ դպրոցաց միջոցաւ Հայոց ազգը կաթոլիկ ընել է, լաւ ևս ասել հերետիկոս ընել է) դուրս թափեցին. զորն որ երբեմն ծածկելով միարանութիւն սէր ցուցնող կը ձևանային, և որուն սիրովը ազգը պատշաճ դատեր է այս մեծարելի Սրբոց անունը իրենց խնդրանօք անյիշատակ թողուլ[1]. բայց զուր տեղը մինչև ցայսօր սպասեց իրենց խոստացած միութեանը, ինչու որ այն հայհոյելի տետրակին մէջ այն ուխտը հայհոյելի գեպք կանուանեն, ու յանդուգն բերնով լուսաւորչական Աղգս հերետիկոս ու հերձուածող ըսելու կը յանդգնին. բայց չէ հոգ «պատսիան ոչ է՝ ի պատուեալն այլ՝ ի պատուողն»։ վասնորոյ կը յուսամք այսուհետև որ կ'սարքնայ Աղգը իրեն այն Սրբոց անունները մինչև ցայսօր Պօլսոյ մէջ անյիշատակ թողէին, և կը շարունակէ բոլոր Եկեղեցեաց մէջ յիշատակել ըստ առաջնոյն։

Եթէ շաբաթագիրնուդ մէջ տեղի շնորհէք սոյն յօդուածիս, մեծ պատիւ պիտի համարիմ նուաստութեանս։

Սեպտեմբեր 30 համ անշնաուէր ծառայ
1852 Հայ ոմն։

---

[1] ըստ գումարին հետ աւելորդ սեղեցիկ իրիւել ան ողորմութիւնները որ ասկէ առաջ նշեան ազգանուն մեջտեղ հրապարակեալ են։

[1] Այս ընթացքին դէմ ժամանակին մեծ բողոքներ եղան ճշմարիտ ազգասէր Հայոց կողմէն, իրր անիրաւ և անվաւեր։

— Աղատամիտ այսինքն հայոց ըստ արժանւոյն գովասանութիւն ընելը մեզք կամ յանցանք չհամարօղ հռովմէադաւան պատուաւոր անձ մը անցեալները Իզմիր գացած ըլլալով՝ հետեւեալ նամակը մեզ ուղարկած էր, զոր սիրով կը փութամք Ազգեան Աղաւնւոյ մէջ հրատարակելու, յուրախութիւն և՝ի պարծանս ազգային ուսումնական յառաջադիմութեան ցանկացող յարգելեաց։

«Յարգոյ տեարք Ազգեան Աղաւնւոյ

«Ամենայն սրտի կը փութամ իմացընել իմ գոհութիւնս տեսնելով Օմիւռնիոյ Հայազգի հասարակութեան վրայ անանկ պանծալի ձիրքեր որոնց հայրենասէր հիւր մը անարբեր չի կրնար ըլլալ։ Հոս պանդուխտ մը կը գտնայ Հայաստանեայց հին աւանդական հիւրընկալասիրութեան հետ քաղաքավար ընտանութիւն մը և քաղցրաբարոյ մարդասիրութիւն մը որ կրթելագոյն ազգաց անգամ նախանձելի կրնայ ըլլալ։ Հոս ընդհանրապէս հայերը իրենց հետ գաղթած հայրենի կրօնական սկզբանց ու մայրենի լեզուին վրայ շատ յարմարութեամբ յունական քաղցրութիւնը և եւրոպական քաղաքավարութեան բարեմասնութիւնները աւելցուցեր են։ Օմիւռնիան որ յարեւելս Հայոց գրական վերածագման օրօրոցն է եղեր իր այլեւայլ ուսումնական հաստատութիւններովն, ազգային ընդհանուր տգիտութեան անապատին մէջ յիրաւի Օազիս մըն է, ուր Հայերը իրենց սակաւամարդութեանը նայելով՝ Օմիւռնիոյ ուրիշ բաղմաթիւ հասարակութեանց առաջինը կրնան սեպուիլ։ Արդ զանց առնելով Օմիւռնիացի ազգակիցներնուս առուտուրի և զանազան տերութեանց ծառայութեանը մէջ մեծամեծ պաշտօններով պարծանք ստացած յաջողակութիւններնուն վրայ խօսելու, պարտ կը համարիմ ինձի անոնց ուսումնական մասին մէջ ունեցած յառաջադիմութեանց վրայ քանի մը տող հաղորդել ձեր հրամանոցներնուդ։

«Պէտքութեամբ կը տեսնամ շատ անգամ պարկեշտ ու նաեւ ասիական երեւոյթ ունեցող անձանց վրայ անանկ լեզուագիտական հմտութիւններ ու ընդհանուր փափագ մը ուսումնականութեան, որ ստիպեն է ըսելը թէ հոս քան ուրիշ տեղեր ալէկ միտք առեր են այն գաղղիական առածը որ կըսէ «զգեստը չէ մարդ ընողը»։ Նոյնպէս կանանց կրթութիւնը որ ազգի յառաջադիմութեանը անսխալելի նշան է, հոս շատ զարգացեր է ու Հռիփսիմեանց անուն աղջկանց դպրատան միջոցով կը յուսացուի օր ըստ օրէ շատ աւելի զարգանալը, ուր այսօր այցելութիւն ընելով յիրաւի ազգասիրական քաղցր բերկրութեամբ լեցուեցաւ սիրտս, երբոր տեսայ Աբրահամեան ազգին դստերց համար քարաշէն գեղեցկատես շինուածք մը կանգնեալ ազնուատոհմ Հռիփսիմէ Կոստանդեան տիկնոջ առատաձեռնութեամբը. Ահ, ճշմարիտ պարծանք ազնուասիրտ հոգւոյ մը։ Վասն զի անոր պարգեւները վայելող աշակերտելոց հանապազօրեայ երախտագիտութիւնը անանկ վսեմ հոգւոյ անշուշտ փառասիրութեանը արդար հատուցումն է։

«Այս վարժարանին մէջ գրեթէ երկու հարիւր յիսունէն աւելի այլ և այլ հասակէ աղջիկներ իրենց հայրենի լեզուին կրթութեամբը օր մը ընտանեաց մայր ըլլալու հարկաւոր եղած բարոյական և ուսումնական մարզից մէջ կը վարժին ու գիմացնիս եղած հարցուփորձներուն քաջ յստակ ու յարմար հայրենական զուտ լեզուով տուած պատասխանովնին իրենց վսեմահոգի հիմնադրոյն ու ազգին փափաքը լիովին լեցուցած տեսայ։ Դարձեալ այս կրթութեանց հետ մէկ տեղ կանանց վերաբերեալ ամեն տեսակ ասղնեգործական հիւսուածոց ու մանուածոց ձեռքի ճարտարութիւնները կը սովրին նոյն տղայքը, որոնց մէջ ըրած զարմանալի յառաջադիմութիւններնուն ապացոյցները իրենց ամեն մէկ մասին իրր օրինակ բռնած ձեռագործներնէն տեսանք։ Այս դպրատան անօրէնութիւնը առաքինարարոյ վարժապետի ու մաքրակենցաղ վարժապետուհւոյ հոգատարութեամբը կրնայ, որոնք երկուքն ալ հայազգի ըլլալով՝ իրենց տուած կրթութեանը մէջ հայրենական հոգին անարիւ մնալով աղտա են այն պակասութիւններէ որ ընդհանրապէս կը տեսնուի օտարազգի դաստիարակներու ձեռքէ եղած օրիորդաց վրայ, որոնց շատ անգամ առած կրթութիւնը համեստութեան պատմուճան ըլլալու տեղ աւելորդ ու մեծաւակար պաճուճանք մը կըլլայ։

«Բանկ գեղեցիկ կերպով սկսած օրուան գեղեցկագոյն փախճան մը տալու մտոք՝ անկէ դէպ՝ի Արեւմտեան Համբաւաւոր վարժարանը ուղղուեցայ։ Այս վարժարանը որ ազգային նախանձելի հաստատութիւններէն մէկն է ազգին պարծանք եղած խել մը աշակերտներու օրօրոցն է եղեր միշտ։ Երբեմն ազէտալի հրկիզութեան լուցներու ճարակ եղած զարձեալ նորականգնեալ ազգասէր անձանց նպաստիւքը, դեռ յարեւելս Հայոց ազգին կատարելագոյն վարժարանն է կրնամ ըսել։ Հոս տղաքը բազմահմուտ Պ. Ենդրեաս վարժապետին դաստիարակութեամբ, որն որ անօրէնութեան պաշտօնն ալ ունի՝ հայերէն մայրենի լեզուին մինչև գերագոյն դասերը կելլեն. նոյնպէս գաղղիարէն, անգղիարէն արդի յունարէն ու տաճկերէն լեզուաց յատուկ քաջ ուսուցիչներու ձեռքով իւրաքանչիւր լեզուին մէջ մեծ յառաջադիմութիւններ կընեն աշակերտելք։ Նաեւ պատմական աշխարհագրական ու չափաբերական ուսմունքներու մէջ ալ կը մարզուին, որոնց ամեն մասին մէջ յառաջադէմներ չեն պակսիր։ Չեմ կրնար լռութեամբ անցնել Ենդրեաս . . . . տղու մը վերոյիշեալ դիտելեաց մէջ ըրած հրաշալի յառաջադիմութեանց հետ իրեն գծագրական ու վայելչագրական ընդունակութիւնը, որուն ճաշակը առինք գծագրած աշխարհացոյց տախտակներուն մաքրութիւնը ու ճշդութիւնը տեսնալով։ Բանկ բնութենէ առատապէս մասնաւոր ձիրքերով վարձատրուած տղաքը. պէտք է ազգին ճոխերուն ազգասիրութիւնը շարժելով անանկ մասնաւոր ու ազգային պարծանք ըլլալու տաղանդները արդիւնաւորելու միջոցները դիւրացընէին։»

Օմիւռնիա, 20 օգոստոսի 1852։

ՏԵՍՈՒԹԻՒՆ
ԸՕՓԵՑԻՆ ԼՐԵՊԻԵՑ

— «Անքսիկայի դատաստանական ատեանները կրօնական խստութիւն մը ըրին այս օրերս։

«Լաֆօն անուն գաղղիացի մը ուրիշ գաղղիացի աղջկան մը հետ ամուսնանալ ուզելով, տեղւոյն եկեղեցական իշխանութեանը կ'երթան, որ ըստ հռովմէական արարողութեան ամուսնութիւնը կատարուի, բայց իրենցմէ շատ ստակ պահանջուելով և կարողութիւնին չի բաւելով այնչափ ստակ վճարելու, միտքերնին դրին որ իրենց ամուսնութիւնը գաղղիական օրինաց համաձայն տեղւոյն հիւպատոսին առջև կատարեն և անանկ ըրին։

«Անքսիկայի եկեղեցականներն այս բանին նեղանալով, իրենց դատաստանական ատեանները կը գրգռեն, և խկոյն գաղղիացիին տունը կը կոխեն, դուրս կը հանեն ու բանտը կը դնեն. կինը փախչելով կ'աղատի։

«Մարդը երկու ամիսի չափ բանտը մնալէն ետև կը դատուի ու չորս տարի բանտարկութեան կը դատապարտուի իրրև եղեռնագործ։

«Գաղղիոյ հիւպատոսը բողոք ըրաւ Անքսիկայի կառավարութեան և պահանջեց, որ անմիջապէս թող տրուի գաղղիացին, կրած վնասները հատուցուի և այս բռնութիւնը ընդդատաւորը պատժուի։ Կառավարութիւնը երկար քննութիւն ընելէն ետև՝ դատաստանին վճիռը հաստատեց և գաղղիացին բանտը մնաց։

«Կը լսենք որ Գաղղիոյ կառավարութիւնը աղքատ միջոցներ ձեռք առեր է յիշեալ գաղղիացին ազատելու և այս անիրաւ բռնութեան համար հատուցում պահանջելու Անքսիկայի կառավարութենէն։

«Այս գժտութեան պատճառը՝ ինչպէս յայտնի կը տեսնուի, քաղաքական ամուսնութիւնն է, որ այս վերջին օրերս Սարտենիայի տերութեան մէջ ալ այնչափ գրգռութիւններու առիթ եղաւ (տես Աշխ. թիւ 18—32)։ Զարմանալին ան է, որ եթէ այս օրէնքը հռոմէական կրօնին դէմ է նէ, ինչպէս կ'ըլլայ, որ Գաղղիոյ մէջ բնաւ ընդդիմութիւն չգտներ և եկեղեցականաց կողմէն և ոչ Հռոմի Պապէն, որ «անդրանիկ դուստր Եկեղեցւոյ» պատուանունով կը փառաւորէ գաղղիացւոց ազգը իրրև խիստ ուղղափառ և բարեկրօն հռոմէական։ Ուստի եթէ Գաղղիոյ մէջ այս օրէնքը ուղղափառութեան դէմ չի գարնէ, հարկաւ պէտք է, որ ուրիշ պապակրօն ազգաց մէջ ալ սրբապղծութիւն չի համարուի, և այս պէս խռովութիւններու և անկարգութիւններու առիթ ըլլալով աշխարհի խաղաղութիւնը չի վրդովէ։ Մակեց կ'երևայ թէ, կըլմաններու տարբերութիւնը հռոմէական եկեղեցւոյ վարդապետութեանցը վրայ իմաստի զանազան ազդեցութիւններ կրնայ կոր ընել։»

Մ—ա։

— Ընդհանրները իտալերէն էրէնէ գրբին չար հետեւանքը յիշած տեսնիս, կը ըսէն թէ այս տարին Վենետիկի Գրագիտարանը մը Խելքը Իրանցուցեր է, բայց այս ըրածը ապուշութեան կարգէն ալ ասկեր էինք։

Այս ցաւալի դէպքը դժբաղդաբար հաստատուած կը տեսնենք ան քարեկամ Աղանդրոս Ուսֆոյենեան դպրոցին ստորագրութեամբ՝ Աբրահամեան Աղաղաւնւոյ մէջ այս շաբաթ հրատարակուած նամակով մը, որուն մէջէն հետեւեալը կը համառօտեմք

«. . . . : Յիշեալ երիտասարդը Աբրահամեան վարժարանի երկրորդ դասու աշակերտներէն Դաւիթեանի պարոն Յովսէփն էր . . . , հարկ եղաւ յիմարը տընէն հեռացընել. և յիրաւի խելքն տնորը բոլորովին շուարեալ էին։ Թէ Պէյօղլուի հռոմէական Հայոց հիւանդանոցը խրկին, հոն կարեւոր եղած բարեկարգութիւնները պակաս են. օրինաւոր բժիշկ ու գեղատուն չկայ։ Գեղէն գեղն ալ այն է, որ ուսումնական յիմարը բոլորովին իր հակառակորդացը ձեռքը պիտի յանձնեն։ Այս խորհրդածութեամբ բոլորովին ետ կեցան ձեռնարկութենէս։ Վերջապէս բարեկամի մը միջնորդութեամբ Աբրահամ Արքեպիսկոպոս տէր Յակոբ Հայոց սրբազան Պատրիարքի փոխանորդ սրբափայլ Նիկողայոս եպիսկոպոսին ազաչեցին, որ Լէսի քուլէի սուրբ Փրկչի ազգային հիւանդանոցը դրուի յիշեալ հիւանդը։ Այս արժանապատիւ անձը խկոյն պատասխանեց թէ մեր հիւանդանոցին դռները բաց են կարօտելոց համար, մանաւանդ ձեր հիւանդը, որ ինչպէս կարծեմ մեր համազգի եղբայրներէն է, կրնայ հոն ազգին շնորհքը վայելել։ Աստուած բժշկութիւն շնորհեսցէ։ Ես ըսելով հրամանագիր մը տուաւ, ուր արժանապատիւ հոգաբարձու ազգէն խնամքը բժիշկը սակէպ այցելութիւն կընէ և օրը երեք անգամ ցուրտ ջրոյ բաղանեաց գործադրութեամբը բարելաւութեան նշաններ կը տեսնուին այս մեր խեղճ բարեկամին վրայ։ Հիւանդանոցիս կերակրոյ, անկողնոյ և զգեստի մաքրութեանը, որոնք ճրիապէս կը շնորհուին, մեծ զգուշութիւն կընեն տեսուչք, որով ըստ ամենայնի եւրոպական բարեկարգ հիւանդանոցաց կանոնաւորութիւնն ունի. և քանի որ քաղաքիս միւս ազգային հիւանդանոցաց մէջ յիմարաց գեղը ցեղն ու շղթան է, հոս ընդհակառակն բոլորովին քաղցրութեամբ կը վարուին այսպիսեաց հետ։ և եթէ անվնաս ըլլան, ինչպէս մեր խեղճ բարեկամը, ազատ են պարտիզաց մէջ շրջագայել առանց կապանաց։

» Երանի թէ սրբափայլ Նիկողայոս Հայր և բոլոր ազգային հիւանդանոցիս բարեջան հոգաբարձու Ազգայնց ցեղուցած մարդասիրական և քրիստոնէավայել անխարդ ողորմածութիւնն օրինակ ըլլան անոնց, որ կրօնամոլութեան ոգին կեղծաւորութեան ծպտանքով կերպարանափոխեր են. որով մարդասիրութեան քաղցր ջերմութիւնն երբեք չեն զգար. և իրրև միմիայն հոգւոց փրկութեան եռանդով վառեալ՝ տակարափանները կուզեն համոզել որ խորշին յատկապէս իրենց Հայ ազգակիցներէն, բայց ոչ այլազգ ու այլադաւաններէն։ Կուզէի հոս միայն մի յիշել անցեալ օգոստոսի 10ին Սամսթիոյ առաջնորդ Հէրմեան Սիմոն վարդապետին ըսած նախատական ու մոլեկին զրոյցները՝ յիշեալ թշուառ անձին փրկչի հիւանդանոցը գրուելուն վրայ՝ առ պարոն Գրիգոր Դաւիթեան եղբայր յիշեալ Պ. Յովսէփին։ Այլ լաւ ևս կը համարինք լռելիայն անցնիլ. և միայն կըսենք թէ յիշեալ գոլէճցի վարդապետը, որ յառաջագոյն պատճառուած էր անզգոյշ վէճերով մեր բարեկամին արդի վիճակին և թէ իւր որեւիցէ յարգի կամ աստիճանի համախոհ եկեղեցականք և աշխարհականք, քանի որ խօսքի վրայ մնաց չկայ, կրնան խիստ աժան նաև ձրի ծախել իրենց ումպէտ բաղդաջանքը. փա՜ռք Աստուծոյ մեր դարին մէջ կը գտնուին այնպիսի անձինք ալ՝, որ կուզեն իրենց ընական խորհրդածութեամբ բանը քննել ու խղճիւ դատել. որոնք կարօտ չեն ամենևին պնդագլուխ կոց պատգամին անրանարար հետեւելու։

» Մեր խեղճ բարեկամին ծերունի հայրն ու եղբայրը երեսնց անվերջանալի երախտագիտութեան նուէրը կը մատուցանեն ազգասէր հարց և իշխանաց և բոլոր ժողովրդեան Հայոց և կաղաչեն զայդպիսի անպատեհ զրոյցներ թէ իրենց ականջն ալ հասնի՝ բանի տեղ չդնեն ու շարունակեն իրենց խնամքը յիշեալ պարոն Յովսէփին վրայ՝ի սէր ազգութեան և՝ի փառս քրիստոնէութեան։ . . . . . »

— «Հալէպի տէր Դէորգ և տէր Արգար արժանապատիւ քահանայից որդիքը՝ մեծարգոյ Արիսաքեան Աարգիս ազգային խնդրանքը և վեմափայլ բարեգութ Արիսաք ամիրայի ազգասիրական շնորհիւը երկուքս տարիէն աւելի Կոստանդնուպօլիս մնալով և այնտեղ ըստ կարեաց կրթուելով զանազան հարկաւոր ուսմանց մէջ, անցեալները վերադարձեր են իրենց հայրենիքը՝ի Հալէպ։ Այս ուսումնասէր պարկեշտ պատանիները, նմանապէս իրենց արժանայարգ ծնողքը որոց սիրտը երախտագէտ զգացմունքներով լեցուն է, կրթութեան լրագրոյս միջոցաւ յայտնել իրենց խոնարհ և անկեղծ շնորհակալութեան հաւաստիքը՝ իրրև տակաւ նշան ազգասիրական բարերարութեանց և խնամոց որ ընդուներ են։

Աբրահամ Աբրահամեան

— Սինկափորի Ուսումնասէր լրագրին 75երրորդ թերթին հետեւեալը կը համառօտենք որ ազգային հոգեւորական վիճակին օգտակար կրնայ ըլլալ։

Բահանայից խօսելով՝ գերապատիւ Եպիսկոպոսը կըսէ։

«. . . . պատուիրեմք ձեզ զի ուսուցչիք ձերոց ժողովրդոց զօրէնս և զհրամանս Տեառն Աստուծոյ և զանձնայն հարկաւոր գիտելի Բիբլիստոնէութեան։ Արժան է ձեզ կատարել զայս պարտաւորութիւն ձեր յամենայն ժամու և՝ի տարիստոնէութեան։ Արժան է ձեզ կատարել զայս պարտաւորութիւն ձեր յամենայն ժամու և՝ի տարաժամու, այլ քանզի՝ի հստակ աւուրս մարթ է ձեզ չունել ժամանակ, վասն այն՝ պարտաւորեմք ձեզ զի յամենայն կիւրակէի աւուրս զկնի միջօրէին ժողովեսջիք զժողովուրդս ձեր, իւրաքանչիւր քահանայ ի կեղեցի թաղի իւրոյ և աշխարհաբառ հարց և պատասխանի ձեւով ուսուսջիք նոցա զհարկաւոր մասունս և զգիտելիս քրիստոնէական հաւատոյ, անուսից ուսուսջիք նոցա որով լեցի ժողովրդոց մեր լուսաւորութիւն մտաց, և նոքօք փրկութիւն հոգւոյ նոցա, որով և դուք և մեք եղեցուք պարտաւորք և մշակ առանց ամօթոյ առաջի Տեառն Աստուծոյ։»

'ի Ջուղայ ՅԺԸ" վանի.
'ի 16. փետր" 1852

(ձեռ.) Պարսկաստանայ և Հնդկաստանայ Հայոց Եպիսկոպոս
Թադէոս։

«Ա. Երեքին պարտաւորութիւնք պաշտնի ձեր, ուսուցիչ լինել տղիտաց, խրատիչ մոլորելոց, և առաքինի ձեր վարուք օրինակ հաւատացելոց. կատարել պարտիք առանց զանցառութեան, զերիս պարտաւորութիւնս ձեր, այլ թէ տկարանայք յուսուցանելն և՝ի խրատելն, գոնեայ հաստատուն կացէք յերրորդ պարտաւորութեան, որ՝ի ձեռս ձեր է։

Բ. Յոր պաշտօնի կոչեցայք՝ի նմին կացէք. պարտիք յամենայն սահմանագրեալ ժամանակի իւրաքանչիւր քահանայ՝ներկայ գտանիլ յեկեղեցւոջն իւրում, ուրանօր և ժրութեամբ կատարել զպաշտօնն իւրեանց մինչ և ցարձակելն ժամին, միայն անհրաժեշտ պատճառիւ զգաւ չգնալն է ներելի. իսկ որք առանց բաւական պատճառաց ծուլանան՝ի գնալ, կամ՝ի գնալն իւրեանց փութապէս եղանեն, գիտասցեն թէ գոյ՝ի վերայ նորայ պատիժք զոր կարգեցեալ եմք՝ի վարդանի։

Գ. Յամենայն աղօթս՝ զմաղթանս՝ զժամերգութիւնս՝ զընթերցուածսն ասասջիք երկիւղածութեամբ՝ մտադրութեամբ՝ և անսխալ, գիտելով զի ընդ Աստուծոյ խօսիք. թէ որ անհրաժարեցեալ (ցաւելով և ապաշխարութեամբ ասեմ) զվաղուանն աւուր պատկանելի ընթերցուածսն ընթերցցի՝ի տան՝ իւրում, սերտասցէ այսօր, զի վաղուանն օրն ասասցէ մտադրութեանբ և անսխալ։

Դ. Յամենայն կիւրակէի և՝ի տօնս հռչակաւոր Սրբոց մատուսցի անմահ պատարագն յիւրաքանչիւր եկեղեցւոջ.՝ի քաւութիւն և՝ի շնորհաբարգութիւն ժողովրդոց։

Ե. Որոք չգիտէ գձայն և զեղանակ շարականացի՝ ուսցի յայնմանէ որ գիտէ զայն և կարող է ուսուցանել. զի մի լեցի եկեղեցւոջ փոփոխանակ ձայնաւորի, զբամբ ձայն հնչել։

Զ. Մի դատարկս շրջիկ լինիջիք, մի խօսակիցք և կեցուցք առաջի կրպակաց, մի լինիջիք վայրախօս զի գրեալ է «թէ ընդ ամենայն դատարկ բանի համարս տալոց էք յաւուրն դատաստանի։»

Է. Ի շրջիլն ձեր՝ մի ժողովեսջիք զքանցս վերնաշալի ձերոյ, և ձգեսջիք՝ի վերայ բաղկաց ձերոց զի անպարկեշտութիւն է։

Ը. Ի լինելն ձեր՝ի տան՝ պարապեսջիք ընթերցուածոց կամ ուրոյն և առանձին, կամ ժողովելով երեք կամ չորս քահանայից՝ի միասին, և որ չգիտէ ինչ անդանօր ուսցի՝ի գիտացողացն։

Թ. Մի՛ զք լեցի արբեցող, զի արբեցութիւն յանդգնութիւն տանէ զմարդն, և պաշտոնեի Աստուծոյ չէ պարտ անբանութեան ենթակայ (լինել)։

Ժ. Ուսուցանել և խրատել, որչափ կարելի իւրաքանչիւրոց բաւական է, մի զանցառուք լի-

ներին գոնեայ՝ի խրատելն, զի յամենայն կիրաւ-
կէի ժողովուրդք եկեսցեն՝ի ժամ, ուրանօր և
կացցեն արք գլխաբաց և երկիւղածութեամբ, և
մանկունք պարկեշտութեամբ և անշշունչ հան-
դարտութեամբ կանգնեսցեն անդանօր, իրատել
և կանանց զի յեկեղեցւոջ լռեցուսցեն զձայնս
լալոյ և աղաղակի մանկանց իւրեանց, ուստուս-
լիք գոնեայ զաղօթսն պատկանելիս քրիստո-
նէական և զգլխաւոր մասունս հաւատոյ քրիստոնէ-
ութեան այնպիսի տգէտ ժողովրդոց, որք զՀայր
մերն անգամ չգիտեն։ Գիտասջիք, զի զանց
առողքն այսոցիկ հրամանաց մերոց մանաւանդ
բ. դ. զ և թ. յօդուածոց, յառաջին անգամն
ներողամիտ գտանիմք ձեզ, յերկրորդումն պար-
տիք Եկեղեցւոյն ձեր տալ իրրև ապաշխարանք
2 —։—ի, յերրորդումն,՝ի չորրորդումն և՝ի հին-
գերորդումն նոյնպէս իւրաքանչիւր անգամ տալ
2 —։—ի, վեցերորդումն մինչև ցասներրորդ
անգամ զանցառութիւն յիւրաքանչիւր ան-
գամն պարտիք տալ 4 —։—ի. իսկ յանցսնելն
տասներրորդ անգամի գիտասցեն այնպիսիքն զի
կամ պարտին զգործս և զվարս փոխել և կամ ըզ
պաշտօնս իւրեանց։ Եւ մեք պարտաւոր լինելով
այնուհետև ըստ առաքելոյն հրամանի զսասան
մեր պարտաւորութեան առաջի առնել և զստա-
կոութիւն այնպիսի յամառողաց նուաճել սան-
ձիւք։

Յետ ծանուցանելոյ ձեզ կարճ՝ի կարճոյ
զպարտաւորութիւն հոգևոր պաշտման ձերոյ
յայտնեմ և զյետագայս։

Ա. Քահանայք չպարտին խառնել զին-
քեանս յարտաքին կառավարութիւնս և յիրո-
ղութիւնս Եկեղեցւոյն, և այս հոգ թողեալ
լեցին՝ի վերայ երեցփոխանաց, զորմէ կարգաւո-
րելոցսմբ լիովին։

Բ. Իւրաքանչիւր Եկեղեցւոյ քահանայք
պարտին ունել զտետր մի՝ յորում գրեսցեն
զամենայն զծնունդ, զամուսնութիւն, և զմահ
ժողովրդոց թաղին իւրեանց, որք գրեալ լեցին
որոշք և ամսաթուովք, և՝ի լրանալ ամին գու-
մարեսցեն զմիւսնելոցն, ամուսնացելոցն և մա-
հելոցն, և ծանուսցեն զայնս թեմական Առաջ-
նորդին։

Գ. Յոր աւուր լեցի մկրտութիւն, պսակ
կամ մահ, պարտիք ծանուցանել երեցփոխա-
նին, զի և նա գիտացեալ կարող լինիցի ստա-
նալ զսահմանադրեալ հասս եկեղեցւոյ։

Դ. Գիտասջիք զի ամ դիաղարդք եկեղեցւոյ
են, լուսաղին տուեալ վասն խաչ հանելոյ ջրօրհ-
նեաց, վասն դռնաբացութեան և վասն վա-
րագոյր քարշելոյ նոյնպէս եկեղեցւոյ են, քա-
հանայք չունին զմասն՝ի նոցանէ։

Ե. Ժողովրդոց տուեալ մոմք եկեղեցւոյն են,
քահանայք ունին իրաւունս միայն տանելոյ՝ի
տունս իւրեանց զայնպիսի մոմ՝ որք տուեալ
լինին նոցա՝ի պաշտօնի ննջեցելոց, ՝ի նշան օրհ-
նութեան ամուսնացողաց և՝ի ծննունդ օրհ-
նութեան նորածնելոց։

Զ. Պարտիք խնամ տանել վասն մաքուր
և յստակ պահելոյ զանօթս եկեղեցւոյն նոյն-
պէս և զեկեղեցին։

Է. Սքեմոյ տաջիք այնպիսեացն՝ որք չու-
նին զիշխանութիւն սարկաւագութեան ընթեռ-
նուլ յեկեղեցւոջն՝ի լուր հասարակաց զԱւե-
տարանն Սուրբ, զի չէ արժան նոցա. այլ գուք
քահանայքդ ընթերցջիք զայն։"

՝ի Զուղայ Ամենա" վանի։

՝ի 18 փետրվարի 1852.

(ձեռ.) Պարսկաստանայ Ա. Ընդհան-
տանի Հայոց Լուսաւորչա-
թեան

— «Ընցեալները 60 տարեկանէն վեր մու-
բացկան մը մեռնելով՝ 25 հազար դահեկանը
ելաւ պահած. (բայց որպէս թէ ասանկները ժա-
ռանգ որդի չունենալու դատապարտուած են).
8—10 տարեկան տղայ մը ունէր նէ՝ ան ալ իր
մեռնելէն առաջ ծոլը խղդուեցաւ, և ունեցած
ժառանգութիւնները ուրիշները վայելեցին։

«Այս ազահը իրեն երիտասարդութեան ժա-
մանակները նաւավարութիւն ընելով ազէկ
կ'ապրի եղեր. ծերութիւնը քիչ մը պատահա-
ծին պէս սկսեր է մուրացկանութեան արհես-
տը հանդերձ ազահութեամբ գործածել ու ըս-
տակ դիզել. որուն ամենէն վերջի օրերը ան-
գամ ըրած կծծութեան երևոյթները՝ ծիծա-
ղելի նկարագիր մը կը ներկայացընէին տեսո-
ղաց առջև։"

— «Ընցեալ շաբթու Մուրատճա գիւղէն
չորս պատանիք ընկերութեամբ Կէյվէյի նա-
հանգը Լոկար գիւղի Շէհիրէն ըսուած թա-
ղը՝ թօփ—սագալ—օղլու Մուստաֆա աղային
մետաքսը կը քաշէին. ասոնք խորհուրդ ըսեր
են՝ որ այս մետաքսին մէջէն իրենց ալ անիրաւ
բաժին մը հանեն. ուստի այս չար խորհուրդ-
գիս՝ չորսէն երեքը հաւանութիւն տալով՝ մէկ
շաբթուան մէջ երեք հօլայի չափ մետաքս գող-
ցեր և պահեր են. իսկ այն բարեմիտ և հա-
ւատարիմ ընկերը՝ որ չէ ուզեր անոնց հետ գո-
ղակից ըլլալ, և այն գողունի մետաքսներուն
տեղը քաշ դիտելով՝ առանձին Մուստաֆա ա-
ղային բանին որպիսութիւնը կը ծանուցանէ. ան
ալ իսկոյն վեց ութը դրացիներով կ'երթան մե-
տաքսը անոնց պահած տեղէն կը հանեն, և
ձեռքերնին եռանին կապելով՝ Կէյվէ ոստիկա-
նին կը բերեն, որն որ տեղւոյս Յարգամծար
մետաքսի գործակալին իմաց տալով՝ աս հետեւ-
եալ պատժովս փառաւորապէս կը պատժեն
Կէյվէյի վաճառին օրը։"

«Գողցած մետաքսին պատշաճագոյն կեր-
պիւ մը փակելի (սարբդ) պէս գլուխնին կը
փաթթեն ձեռքերնին եռանին կապած և վիզեր-
նին շղթայնէն պախուրց (իլար), երկու կող-
մերնուն երեք երեք հատ պահակ (զապթիէ).
առջևնուն բարձրաձայն մունետիկ մը թող կու-
տան, որն որ իր ահեղ ձայնովը փողոցները կը
թնդացընէր աղաղակելով և քարոզ կարդալով
թէ՝ «իփէկ գողցողին հալը աս է». և այս-
պէս ամենախայտառակ կերպիւ բոլոր շուկային
մէջ շուրջ ածելէն ետքը՝ օր մը ալ ոտքերնին
՝ի կոճղել կը պնդեն, և շատ յանդիմանելով
կ'արձակեն որ երթան։"

«Օգնի արձակման ասոնք որ ուղղակի նոյն
գիւղը կերթան, մէկ քանի անձինք կուգեն որ
իրենց մետաքսին ալ քաշեն, (աւելի ազէկ
կ'ըլլար եթէ ըսէին եկէք մեր մետաքսներն ալ
գողցէք). բայց վերոյիշեալ Մուստաֆա աղայն
և ուրիշ պատուաւոր անձինք կը յորդորեն զա-
նոնք որ չի թողուն գիւղին մէջ այսպիսի յայտ-
նի վնասակար մարդիկ. բայց տակաւին միւս-
ներուն խնդրը անդիի ծայրը ըլլալով՝ «գողցան
նէ ձեր մետաքսը գողցան, մեղի վնաս մը չու-
նին» ըսելով՝ կը պնդեն որ մնան. իսկ Մուս-
տաֆայանք կը նային որ ասոնց խօսք չեն
կրնար հասկցընել, տեղւոյս ոստիկանին վե-
րըստին կ'իմացուցեն որն որ գիր խրկելով կը
հրամայէ որ իսկոյն ելլեն իրենց հայրենիքը եր-
թան անգամ մըն ալ չի դառնալու պայմանաւ։"

«Արժանի է պատժոց, որ ինքնին՝ի խընդիր լինի այնմ։"

Հայրենաբեր Ռիս- 55

ՕՏԱՆԱՕՏԱՆ ԼՈՒՐԵՐ

— Եգիպտոսի կուակալութեան արտաքին գործոց վերակացու Լահէմ փաշայն՝ Անէ ըս-
ուած եգիպտական շոգենաւով Մայրաքաղաքս
հասաւ։ Ժամանակ որ Ալեքսանդրիոյ լրագրին
Զանաք քալէսիէն գրուած նամակէ մը կիմացուի թէ հետը քանի մը արաբացի աղջիկներ
բերեր է, որոնք քաջ երգեցիկ և երաժիշտ են։

— Յոնիական կղզեաց ընդհանուր կառա-
վարիչ Լորտ Ջէնրի Լուսոր Լոնդոն անուն
յոնիական շոգենաւով Մայրաքաղաքս մեկ-
նեցաւ իւր պաշտօնատեղին վերադառնալու
համար։

— Ուրբաթ օր հարաւային հողմը 400ի չափ
նաւերուն Մայրաքաղաքիս նեղուցը և նաւա-
հանգիստը մտնելը յաջողեց։ Այլ նոյն օրը
առաւօտուն նաւահանգիստը մտնելու թոյլ-
տուութեան խուզթ ստանալու համար՝ նոր ե-
կող նաւերուն մէկ շատ նաւակները մաքրանո-
ցին առջևը լեցուելուն՝ մէջերնին ակամայ հա-
ղորդակցութիւն պատահեր է։ Դժբաղդաբար
այս նաւակներուն մէջ Պէրութէն եկած անմա-
քուր նաւ մըն ալ գտնուելով՝ տեղւոյս մաք-
բատան Խարձր ժողովք Մայրաքաղաքը և շրջա-
կայ տեղերը հինգ օր տրոնդիրաչ տակ դրաւ։

— Իզմիրէն մեր յարգոյ թղթակիցը սեպ-
տեմբերի 8ին կը գրէ։

«Անցած շաբաթ իրիկուն ժամը երկուքը քա-
ռորդ անցած էակ Պուլբ էշեր ըսուած շուկան՝
(որն որ էակ Պէլէտէնին մէկալ կողմն է) կրպակ
կի մը մէջէն կրակ բռնկեցաւ ու մէկ ժամուան
մէջ 13 խանութի մոխիր դարձուց։ (Կը հաս-
տատեն թէ ու հաստատ է որ կրակը յատուկ
դիտմամբ դրած էր) Հազար փառք Աստուծոյ՝
խախտանութեան որ նոյն կնոջ ամենեին հով
չեր փչեր՝ երկնքին երեսը հանդարտ էր. եթէ
քիչ մը հով ըլլար՝ կարծեմ ամենամեծ վնաս-
ներ պիտի պատճառեր կրակը՝ որովհետև հա-
ղուստ շուկաներուն գրեթէ մէջ տեղն էր։ Ընդ-
ուստ շուկաներուն գրեթէ մէջ տեղն էր։ Ընդ-
ուղեր ժխտել նաև զենուորական պաշտօնատեր-
ներուն ու զենուորներուն անխոնջ ջանքը որ
շուտով կրակին առաջը առին։ Այս կրակին վը-
նասը (կըսեն) 180,000 ղուռուշ է։"

— Կուզէր որ Պոլ ընուած Հելվետիոյ լը-
րագիրը կը գրէ թէ 1851ին Հելվետիոյ մէջ
184 լրագիր կը տպուէր և 1850ին 202 լրագիր
կը հրատարակուէր. բայց ոտորագրողաց թիւ-
ը 1851էն 1850էն աւելի եղեր։ որովհետև
1850ին ընդ. ամենը միայն 7,238,358 օրինակ
և 1851ին 7,508,985 օրինակ կը բաժնուէր։

— Լոնտոնի Եւ-Բէյ ըսուած լրագրին մէ-
ջէն՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները բնա-
կող Եւրոպացի զանազան ազգաց թուոյն ցու-
ցակը հետևեալ կերպով կը համաոտեմք.

	Հոգի
Անգլիացի և սաքսոնիացի . .	11,000,000
Սկովտիացի	700:000
Իրլանտացի անգլիական ցեղէ . .	1,500,000
Դարձեալ Իրլանտայի Սելտ+ցեղէ	2,000,000
Կալլէսցի	300,000
Գերմանացի	2,000,000
Հոլանտացի	800,000
Գաղղիացի, Հ-Գ-ս ըսուած բողոքականաց մասին հետ . . .	1,000,000
Տանիմարքացի և Նորվէգիացի . .	100,000
Շուէտցի	100,000
Հելվետիացի	50,000
Սպանիացի, Իտալիացի և այլն . .	100,000
Ամերիկեցի, գերի և ազատ սև . .	3,600,000
ընդ. ամենը	23,250,000

— Անգղիոյ լրագիրներուն մէկուն մէջ Լոնտոնի հետևեալ վիճակագրութիւնը կը կարդամք։

Միջնակ մայրաքաղաքին մէջ 2,300,000 բնակիչ, 300,000 տուն կան, որոց վարձքն է 9,000,000 լիրա-ռիբլէն, 15,000 փողոց, հրապարակ, նեղ փողոց և այլն կան, որոց երկայնութիւնը 18 մղոն և լայնութիւնը 7 մղոն է. 10 նաւարան, 8 կամուրջ. 8 ջրի ընկերութիւններ, 8 երկաթուղեաց կայարան, 7 ընկերութիւն գերեզմանատանց, 6 հասարակաց պարտէզ, 340 եկեղեցի և մատուռնք, 370 տարբեր կրօնից եկեղեցիք, 250 հասարակաց դպրատուն, 550 հասարակաց պաշտօնատեղիք, 14 բանտ, 8 ոստիկանութեան պաշտօնատեղիք, 22 թատրոն, 50 վաճառատեղի, 400 պանդոկ, 6,000 գինետուն և գարեջրոյ կրպակ, 3,000 սրճատուն, 16,150 կոշկակար, 14,560 դերձակ, 13,210 ատաղձագործ, 6,850 աղիւսագործ, 2326 կապարագործ, 5,040 տուն ներկող, 2,700 խոյրաշինաւ և գուլպայաշինաւ, 2,640 ժամագործ, 1,180 հին զգեստներ վաճառող, 1,090 քիմիագործ 2,140 տակառագործ, 4,000 շարադրող և այլն 1,000 կաւք շինող, 2,200 սափրիչ, 1,000 կարկանդակ(պէօրէկ)ծախող, 4,400 մնավաճառ, 1,600 պանրավաճառ 1,100 քըթախոտ և ծխախոտ ծախող 2,170 կառագործ, 6,000 հացագործ 5,000 նպարավաճառ, 4,200 ջուխա ծախող, 1,500 կաթնավաճառ, 2,900 ակնավաճառ 5,000 մեծ ու պզտիկ կառք վարող կան. բնակիչները տարին 190,000 եզն, 776,000, ոչխար, 250,000 գառն, 250,000 որթ, 300,000 խոզ, 120,000 տակառակշիռ ձուկ 12,000,000 քուարթը (96,000,000 քիլէ) ցորենն (ներս մտած անչափ սալիւրէն զատ) 10,000,000 կալոն կաթ, 65,000 տակառ գինի, 2,000,000 կալոն ոգելից ըմպելիք, 2,000,000 տակառ գարեջուր և 3,000,000 տակառակշիռ հանքային ածուխ կըսպառեն։

— Պէրլին մայրաքաղաքին մէջ հրատարակուած օրական, շաբաթական և պարբերական լրագիրներուն թիւը առ այժմ 105 ըլլալով ասոնցմէ 17ը շաբաթը վեց անգամ, 15ը շաբաթը երկու կամ երեք անգամ, 26ը շաբաթը մէկ անգամ 6ը երկու շաբաթը մէկ անգամ, 27ը ամիսը մէկ անգամ 9ը երկու կամ երեք ամիսը միանգամ, և 5ը առանց որոշեալ ժամանակի շարունակ կը հրատարակուին։

Վերոյշեալ լրագրաց 15ը քաղաքական, 4ը օրինական, 1ը վիճակագրական, 3ը երկրագործական, 7ը բժշկական, 2ը առևտրական 22ը բարոյական և աստուածաբանական. 1ը ճարտարապետական, 2ը դատաստանական, 4ը զինուորական, 3ը գեղարուեստական, 16ը բանաստեղական և վիպասանական, 5ը թատրոնական, 3ը նորելուկ սովորութեանց (մոտայի) վերաբերեալ, 1ը ձիընթացական. 4ը ծանուցմանց. 1ը պատկերհանական նիւթերու վերայ կը գրեն

— Ամսապատասխանի մը կ'գրէ մեզ՝ի...է՝ի հրատարակութիւն։

«Արշալոյս Արարատեանի 423 թերթին մէջ հրատարակուած հանելուկի մը նոյն թերթին 424 թուոյն մէջ արուած երկու լուծմանց նկատմամբ։

» Խաղարկուայ դէպքը՝ երբոր 24 կամ 36 —ի-ղէ բոմբը գոնայ, իրեն կ'ելլուի գ— ընկերն գարն գ— ընկերն գարն. ու խաղալն բոբը գարն կամ բոբին այն տանն կ'ելնայ, երբոր ըստ պայմանաց (թէ որ —ելլ— գոռ կամ ելլոռ այսինքն կրկնախաղ կամ եռախաղ ու տարին 24 կամ 36 թիւ տեղուէ) առաջին՝ ու երկրորդ՝ ու երրորդ խաղը վասարկի՝ ինչպէս տախտակնարտի խաղին մէջ. եթէ ոչ՝ առաջին խաղով չեկնեք վասակիլ, (թէ որ յարմարութիւն չունին) մինչև որ 7 մոլորակները մէկէն, կամ 5 գիսաւորները մէկէն, և այն՝ գնտանարտին տարբերն գոնէ միայն մէկ ամէն ետքը, որովհետև թէ որ ամսոյ մը շրջանը ըլլայէն առաջ՝ այսինքն երկու կողմն դեռ թիւ մը չվասակուած ընդհանուր խաւարմունք մը տեղի ունենայ, այն է պարտ։։ ըլլայ՝ ամէն մէկ գիսաւոր աշտանակիկ կամ մոլորակ գունտ իր սովորական, ամսոյ արժողութեամբը կ'հաշուի։

» Ուրեմն քաղցրալուր չէր արդեօք որ փոխանակ գնդակաձև ու գնդակաձև երկայնավանկ բառերուն գնդաձև կարճավանկը ըսուէր։

» Ի՞նչպէս պիտի ըսուէր արդեօք 2 խաղ կամ երեք խաղ վասակուած բարին հայերէնի մէջ։» Յ. Պ. Ս. Թ. Ս. Ջ։

ԱՄԵՐԻԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Աղբիանոպոլիս 28 սեպտեմբերի։

Թէքսաս գոնստիթիւսիոն կոյ ունի Գալվեստոն դեպատոկ գինեբը սիրի ելնան, դեր դեպատոկ ապրանքը նորէնոր բանոնոնրին կ'ըսպանոյ։ Կարծը 237 դահեկանի ծախուեցաւ։ Ելեկոյնը 183ի։ Երկրորդ դեպատոկ ապրանքը 190 հանի ելեալ։ իսկ նոր դեպատոկ մը դեպատոկ կոյ որ ըսկոյ լեռնեբեն կոգայ — աշխրա կըսուի։ Սուելի վրայ է — 140էն 145ի կը ծախուի ըսպ դեպատկին։ Ընկեց ալ 7,000 գոյի չափ Թուրքոպ գնայ։

Ամսոյս շաբ ատաբ էն ատ դարի. ահատոյի անոնց գինեբոն յոյսակը։

Կարծը յոյսեն Պօլոյ գելեն ծախ+ ապաբ	17
Կակոր » » »	16
Հաճար	11
Դարի	7 ½

Օդեսա 25 սեպտեմբերի։

Այս շաբաթի վաճառատաք ցիրոնը հասել 25 կոպէկ ելեալ, չէքին 94½էն 95 դահեկանի և այս ապրանքը դիլար նուալ է — ծախելէ դեռ 600 կոպէկ կոյ ըսկան։

Տորոն 300 հակ ըսպ դեպատկին 232էն ինքատան 240 ծախուեցաւ։ Շոկան գոնոատը 2,500 հակի չափ է։

Ղէհրլին վաճառատը ծանր է. 30 պուդի դնայն ծախուեցաւ։ գան 12 12էն½ի. Ջինոնոր ապրանք 150 պուդի կոյ ըսկան։

Խէժը, նուալ է և գինեբը դեր էնալոնքոյ են, 5,000 գոյի չափ ծախուեցաւ։ այս շաբաթ, 16էն 27 դահեկանի ըսպ դեպատկին, դեռ ըսկան 15,000 գոյ կը գոնոի։

Մերգեբոն ատատպոտը դեր դեծ բանոկոնրին։ Ընդամ շաբաթատ է՝ի վեր 2,300 բեռ ըսբ նուալ եկաս որ 11,200 կինդինոր ըսել է — 60էն ինքատան 120 ծախուեցաւ։ կինդինորը. իսկ ընդեր դեպատկը (էլեէմ) 120էն ինքատան 160։ Ալ կարծոնի ունի ատ ապրանքը անցամ դարոատան պէս շատ պիտի ըլլայ. ինքատան հինոյ ըսկան եկամը 14,060 բեռ է — դեռ գալէ 5 կամ 6,000ի կելլէ։

Ղամիը ամեն դեղ դեր նոյն գինեբով կը վաճառուի։

Ամէ Օդեսիոյ և ամէ Անգղիոյ մանիֆաթուրաները դեր յուսահատելի նուալոնրին դեղ են. ղամիներով ապրանք եկող հարցնող չի կոյ։

Խահվէին հինոյ 100 գոյան 550էն ինքատան 610 կը գնդրէն. ըսկան գոնոատը 5,000 պուդի է։

Շաքարը դեղական գոլգամաքոնրեան հատ 190էն ինքատան 200ի կը ծախուի կինդինորը։

ՎԻՊԱԿՐ

Լիսբոնոյ Բերբերեան դեղ հերեւեալ պատերազմի պատերը կը գտնուին։ Ամէն երեքն դեղ — — ամէն 17ը դողը ծառայութիւնս։ երբորդ եղը 45ը դողը գրաւելէն։ երբորդ եղը 21 դողը թնոպուլի. 40 դողը եկեց։ չորրորդ եղը 11 դողը դեպ՝ի Կոստանդնուպոլիս։ չորրորդ երեքն դեղ — — ամէն եղը 63 դողը խլրտեցուցին. 82 — հայազգիներէն։ երբորդ եղը — — ամէն դողը տրամ. 84 դողը մի նոյն դպատ է, որոնք ծառայութիւնն ալ, գառնալէն, թնուլուզի, երեց, դեպ՝ի Աղեքսանդրիա երթալու և անկեց Կոստանդնուպոլիս գալու, խրատեցուցին, հայազգիները, կրամ, մի և նոյն ըլլալ են։

ՏԵՐԵՐ ԼՐԱԳՐՈՂՑ
ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ ՍԱՀԱԿ ԱՊՐՕԼԵԱՆ
Ընդարձակ թարգմանութեան Խաչերեցոյ Դրան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՆՈՑԵԱՆ ԱԳԱՒՆՈՅ
Կոստանդնուպոլիս թաղեան՝ի Պաղչէ գոփոնը